

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2025 թվականի
հունիսի 5-ի N 718 - Ն որոշման

Պ Ա Հ Ա Ն Ձ Ն Ե Ր

ՓՈԽԱՆՑՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ

1. Սույն հավելվածով կարգավորվում են հարկային մարմնի կողմից օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններին (այսուհետ՝ հաշվետու պետություններ) փոխանցված, ինչպես նաև հաշվետու պետություններից հարկային մարմնին փոխանցված ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների (այսուհետ՝ տեղեկություններ) պահպանության հետ կապված հարաբերությունները:

2. Տեղեկությունները ենթակա են պահպանման հարկային մարմնի կողմից դրանց ստացման օրը ներառող տարվան հաջորդող 5 տարվա ընթացքում:

3. Հարկային մարմինն ապահովում է տեխնիկական այնպիսի միջոցների ձեռնարկումը և կազմակերպչական այնպիսի աշխատանքների իրականացումը, որոնք անհրաժեշտ են տեղեկությունները սույն հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան պահպանելու համար:

4. Սույն հավելվածում կիրառվող հասկացություններն են՝

1) միասնական հաշվետվողական ստանդարտի և դրա մեկնաբանության (այսուհետ՝ ստանդարտ) ընդարձակ նշագրման լեզվի սխեմա (այսուհետ՝ սխեմա)՝ տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված և ստանդարտացված ընդարձակ նշագրման լեզվի ձևաչափ՝ ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկության ավտոմատ փոխանակման և ստանդարտով փոխանակվող տվյալների վերաբերյալ կառուցվածքային հետադարձ կապ ապահովելու համար.

2) ստանդարտի կարգավիճակի հաղորդագրություն (այսուհետ՝ հաղորդագրություն)՝ հաղորդագրություն, որը թույլ է տալիս հարկային մարմնին հաստատել ստացված պանակների ստացումը կամ մերժումը, ինչպես նաև տեղեկացնել

ստացված պանակներում հայտնաբերված ցանկացած սխալի մասին՝ սխեմայի ձևաչափով հարկային տեղեկատվության ավտոմատ փոխանակման համակարգի միջոցով պանակները ներկայացնելուց հետո.

3) հարկային տեղեկատվության ավտոմատ փոխանակման համակարգ (այսուհետ՝ համակարգ)՝ համակարգ, որը մշակվել է Հարկային վարչարարության ֆորումի նախաձեռնությամբ և գործում է Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման Գլոբալ ֆորումի շրջանակներում: Համակարգը օգտագործվում է բոլոր հաշվետու պետությունների կողմից՝ ստանդարտով նախատեսված տեղեկությունները և հարկային այլ տեղեկություններ անվտանգ և ստանդարտացված ձևով հաշվետու պետություններին փոխանցելու նպատակով.

4) անձնական բանալի կամ մասնավոր բանալի՝ գաղտնի թվային ծածկագիր, որն օգտագործվում է տվյալների ծածկագրման, վավերացման, ստորագրման համար.

5) հանրային բանալի՝ թվային ծածկագիր, որը կիրառվում է անհամաչափ ծածկագրման համակարգերում և նախատեսված է բաց տարածման համար.

6) հատուկ հանրային բանալի՝ ծածկագրի տեսակ, որը նախատեսված է կոնկրետ նպատակով կամ հատուկ պայմաններում օգտագործելու համար.

7) պանակ՝ տվյալների կազմակերպման տարր, որը պարունակում է ֆայլեր և ենթապանակներ և օգնում է ֆայլերը դասակարգել, կազմակերպել և հեշտացնել դրանց հասանելիությունը:

5. Տեղեկությունների նկատմամբ կիրառվում են՝

1) Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին համաձայնագրի 5-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունների գաղտնիության պահպանման և տվյալների պաշտպանության երաշխիքները.

2) անձնական տվյալների պաշտպանության և գաղտնիք համարվող տեղեկությունների պահպանության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները:

6. Տեղեկությունների պահպանությանը ներկայացվող պահանջներն են՝

1) յուրաքանչյուր հաշվետու պետության համար առանձնացված պանակը համակարգի միջոցով փոխանցելուց առաջ հարկային մարմինը պետք է սեղմի և գաղտնագրի սխեմայի պանակները՝ օգտագործելով թվային ստորագրման համար նախատեսված անձնական բանալին և գաղտնագրման համար նախատեսված հանրային բանալին.

2) հաղորդագրությունը ստորագրելու համար հարկային մարմինը պետք է օգտագործի իր անձնական բանալին՝ ապահովելով հաղորդագրության վրա թվային ստորագրության տեղադրումը: Հաղորդագրությունը ստացող հաշվետու պետությունը պետք է օգտագործի հարկային մարմնի հանրային բանալին՝ ուղարկող պետության ինքնությունը հաստատելու համար.

3) գաղտնագրման համար հարկային մարմինը պետք է օգտագործի յուրաքանչյուր հաշվետու պետության հատուկ հանրային բանալին՝ հաղորդագրությունը գաղտնագրելու համար: Յուրաքանչյուր հաշվետու պետություն պետք է օգտագործի իր անձնական բանալին հաղորդագրությունը գաղտնագրելու համար: Միայն ստացող հաշվետու պետությունը պետք է ունենա մասնավոր բանալին, որը թույլ է տալիս վերծանել սխեմայի պանակները.

4) համակարգի միջոցով հաշվետու պետությունից պանակը ստանալիս հարկային մարմինը պարտավոր է ստուգել ուղարկող պետության ինքնությունը՝ օգտագործելով ուղարկող պետության հանրային բանալին և վերծանել ֆայլերը՝ օգտագործելով իր անձնական բանալին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ